Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-542-31.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «պահպանման» բառից հետո լրացնել «վերահսկողության,» բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ» բառից առաջ լրացնել «ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ գլուխում 16-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-րդ հոդվածով.

«Հոդված 16.1. Վերահսկողությունը ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ

1. Ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի սույն օրենքով սահմանված նախագծման, շինարարության (տեղադրման), շահագործման պահպանման և նորոգման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):

2. Տեսչական մարմինը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վերահսկողությունն իրականացնելիս կարող է մեկ տարվա ընթացքում մեկից ավելի անգամ ստուգումներ իրականացնել քաղաքաշինական օբյեկտներում և ճանապարհաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցում պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվում է քաղաքաշինական գործունեություն՝ այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների սկզբից մինչև ավարտն ընկած ամբողջ ժամանակահատվածում՝ դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկողությունն ապահովելու նպատակով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում
Կ-542-31.03.2020-ՏՀ-011/0
Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «պահպանման» բառից հետո լրացնել «վերահսկողության,» բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «~~Պատասխանատվությունը~~ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ» բառից առաջ լրացնել «~~Վերահսկողությունը ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ~~ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ գլուխում 16-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-րդ հոդվածով.

«**Հոդված 16.1. Վերահսկողությունը ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ**

3. Ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի սույն օրենքով սահմանված նախագծման, շինարարության (տեղադրման), շահագործման պահպանման և նորոգման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ~~քաղաքաշինության և տեխնիկական անվտանգության ոլորտում~~տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):

4. Տեսչական մարմինը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վերահսկողությունն իրականացնելիս կարող է մեկ տարվա ընթացքում մեկից ավելի անգամ ստուգումներ իրականացնել քաղաքաշինական օբյեկտներում և ճանապարհաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցում պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվում է քաղաքաշինական գործունեություն՝ այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների սկզբից մինչև ավարտն ընկած ամբողջ ժամանակահատվածում՝ դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկողությունն ապահովելու նպատակով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Աժ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի և կից օրենքների նախագծերի վերնագրեր	Նախագծի և կից օրենքների նախագծերի վերնագրերում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում նշված «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում նշված «Պատասխանատվությունը» եւ «Վերահսկողությունը ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ» բառերը նշել մեծատառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածում «քաղաքաշինության և տեխնիկական անվտանգության ոլորտում» բառերը փոխարինել «տրանսպորտի բնագավառում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542³-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում նշված «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքի լրիվ անվանումը նշելիս սահմանել նաեւ օրենսգրքի հերթական համարը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներում «վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերից հետո առաջ «հողօգտագործման ոլորտում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք հստակ նշել, որ միայն շինարարական աշխատանքներ կատարելու արդյունքում հանված հողի բերրի շերտը կարող է վաճառվել կամ սահմանել, որ օգտակար հանածոների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի վաճառքի կարգը եւս սահմանում է Կառավարությունը:		

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[6]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Աժ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[4]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում նշված «(այսուհետ՝ Օրենք)»բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի3-րդ մասում հանել «լրացնել հետեւյալ» բառերից հետո նշված երկրորդ «հետեւյալ» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[5]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 5-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ հոդվածում եւ 5-րդ հոդվածում կիրառված «մաս» բառն իր հոլովաձեւերով առաջարկում ենք փոխարինել «պարբերություն» բառով՝ համապատասխան հոլովաձեւերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[8]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում «մաս» բառը առաջարկում ենք փոխարինել «պարբերություն» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[7]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «գործունեության» բառից հետո լրացնել «և քաղաքաշինական օբյեկտներում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[9]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետում «տեսչական մարմնի ղեկավարին» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-542[13]-31.03.2020-ՏՀ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերից առաջ լրացնել «հողօգտագործման ոլորտում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից դիմումների հիման վրա ըստ անհրաժեշտության ստուգումներն իրականացվում են օրենքով նախատեսված դեպքում և կարգով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածում «մարզպետարանում» բառը փոխարինել «մարզպետի աշխատակազմում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: